ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՈՉ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՌՈՒՄՈՒ ՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՑԱԾՐ ՃՆՇՄԱՆ ԳԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԱԶՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԴԴ-ՄԱԾՁԲ-26/05 (Ե-2448)

ք. Երևան 25. 02 2026թ.

Դատական դեպարտամենտը ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Հարությունյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Դատական դեպարտամենտի և նրա առանձնացված ստորաբաժանումների կարիքների համար Բնական գազի ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպության ցածր ճնշման գազատար խողովակների և գազաօգտագործող սարքավորումների տեխնիկական սպասարկման և կարգաբերման ծառայությունների*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին և տրամադրել գազօգտագործող սարքավորումներում հայտնաբերված թերությունների, անսարքությունների վերացման համար անհրաժեշտ փոխարինման ենթակա սարքեր, պահեստամասեր:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **2951200.0 (երկու միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով£ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից£ Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30.12.2026 թ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից տարածվում է կողմերի միջև 03.01.2026թ. փաստացի ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ**
ք. Երևան, Կորյունի 15/1	**«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**ք. Երևան, Ադոնցի 10**
	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 02583241	**Հ/Հ 2470100768150010**
Հ/Հ 900011192151	**ՀՎՀՀ 00930884**
	Հեռ. 010-29-75-27,20-94-60
Ղեկավար՝ Ն. Գալստյան	**Տնօրեն՝ Հ. Հարությունյան**
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ. 00930884

Հավելված 1
«25» 02 2026թ. կնքված
ԴԴ-ՄԱԾՁԲ-26/05 (Ե-2448) ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	76131100/1	Բնական գազի ոչ կենցաղային սպառումը նեցող կազմակերպության ցածր ճնշման գազատար խողովակների և գազաօգտագործող սարքավորումների տեխնիկական սպասարկման և կարգաբերման ծառայություններ	դրամ	**2951200.0**	1	Յուրաքանչյուր	03.01.2026-30.12.2026թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02583241
Հ/Հ 900011192151

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Ադոնցի 10
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2470100768150010
ՀՎՀՀ 00930884
Հեռ. 010-29-75-27,20-94-60

Տնօրեն՝ Հ. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«25» 02 2026թ. կնքված
ԴԴ-ՄԱԾՁԲ-26/05 (Ե-2448) ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2026 թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում	
		I-IV եռամսյակ	Ընդամենը Տարի
1.	Բնական գազի ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպության ցածր ճնշման գազատար խողովակների և գազաօգտագործող սարքավորումների տեխնիկական սպասարկման և կարգաբերման ծառայություններ /ք.Երևան,Թիբիլիսյան խճ. 3 /	2951200.0	2951200.0

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02583241
Հ/Հ 900011192151

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Ադոնցի 10
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2470100768150010
ՀՎՀՀ 00930884
Հեռ. 010-29-75-27,20-94-60

Տնօրեն՝ Հ. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<<____>>_____ 2026թ. կնքված
ԴԴ-ՄԱԾՁԲ-26/05 (Ե-2448) ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02583241
Հ/Հ 900011192151

ԿԱՏԱՐՈՂ
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Ադոնցի 10
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2470100768150010
ՀՎՀՀ 00930884
Հեռ. 010-29-75-27,20-94-60

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2026թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ *Բնական գազի ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպության ցածր ճնշման գազատար խողովակների եվ գազօգտագործող սարքավորումների տեխնիկական սպասարկման եվ կարգաբերման ծառայություններ*
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2026թ.
Պայմանագրի համարը՝ *ԴԴ-ՄԱԾՁԲ-26/05 (Ե-2448)*
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2026 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճ. ենթ. գումարը /հազար դրամ/	Վճ. ժամկետը /ըստ վճ. ժամ.ցույցի/
			ըստ պայմ. հաստ. գնման ժամ.-ի	փաստ.	ըստ պայմ. հաստ. գնման ժամ.ցույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«____» _____ 2026թ. կնքված
ԴԴ-ՄԱԾՁԲ-26/05 (Ե-2448) ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Դատական դեպարտամենտի ----------
(այսուհետ՝ Պատվիրատու) և ----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
---------գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՑԱՆԿ

Բաժ. քարտի համարը	Անվանումը	Հասցեն	Հաշվիչի տիպը	Ծառայության գինը	Հաշվիչի համարը
18001095	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	ք.Երևան, Գարեգին Նժդեհի 23	G-160	**60120.00**	0043257
16008169	ՀՀ սնանկության դատարան	ք.Երևան, Օտյան 53/2	G-100	**90200.00**	7930
15001953	ՀՀ Վճռաբեկ դատարան	Վ. Սարգսյան 5	G-40 Elcor-MU	**88600.00**	40000004
16010311	ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան	ք. Երևան, Արա Սարգսյան 5	G-16	**60315.00**	1622002420
12009669	Դատական կարգադրիչների ծառայություն	ք.Երևան, Բաշինջաղյան 100	G-16 Elcor	**66385.00**	1622002385
Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմին					
11003072	Դատական դեպարտամենտ	ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/9	G65 Elkor-MU	**96250.00**	6519000210
15009267	Դատական դեպարտամենտ	ք. Երևան Կորյունի 15/1,17	G40, G-6	**85700.00**	40000418 6448229
ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
52000074	Արտաշատ քաղաքի նստավայր	ք. Արտաշատ փ. Շահումյան 19	G-6 BK G-6 BK	**137135.00**	12128994 7200162
53000236	Մասիս քաղաքի նստավայր	ք. Մասիս փ. Հերացու 26/31	G-25 A Elkor-MU	**79955.00**	25000266
87000036	Վայք քաղաքի նստավայր	ք. Վայք Ջերմուկի խճ. 8	G-10	**79530.00**	10000701
ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
81000041	Գավառի քաղաքի նստավայր	ք. Գավառ, Սայադյան 18	G-6 MKM, G-4 BK	**57120.00**	2962270 , 12037068
56000077	Սևանի քաղաքի նստավայր	ք. Սևան,Աբովյան 6/1	G-16	**31165.00**	16233274
83000022	Վարդենիս քաղաքի նստավայր	ք. Վարդենիս, Լեոնիդ Ազգալդյան փող. 1-ին նրբ.շենք	G-16	**56250.00**	16000146
57000052	Ճամբարակ քաղաքի նստավայր	ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 99/1	G-16	**89235.00**	16000308
ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
31000152	Վանաձոր քաղաքի նստավայր	ք. Վանաձոր, Մ. Գոշի 6	G-6MKM G-6MKM	**62945.00**	3027706 2673127
32000089	Ալավերդի քաղաքի նստավայր	ք. Ալավերդի, Թումանյան 8	G-16	**66220.00**	16000418
34000102	Ստեփանավան քաղաքի նստավայր	ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 53	G-40 Eicor-MU	**89360.00**	40000142
36000025	Սպիտակ քաղաքի նստավայր	ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան, 2-րդ նրբ.	G-16	**64185.00**	16000511
Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
41000300	Հրազդան քաղաքի նստավայր	ք. Հրազդան, Միկրոշրջան, 16-րդ փողոց թիվ 1/1	G10	**30810.00**	10000798
42000140	Չարենցավան քաղաքի նստավայր	ք.Չարենցավան, Երիտասարդության փողոց, թիվ 2	RPT250	**63880.00**	25000388
45000609	Աբովյան քաղաքի նստավայր	ք. Աբովյան, Կոտայքի փողոց թիվ 8	G6	**28620.00**	060330059
46000160	Եղվարդ քաղաքի նստավայր	ք. Եղվարդ, Չարենցի 29	G16	**60145.00**	16000355
ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
94000009	Աշտարակ քաղաքի նստավայր	ք.Աշտարակ, Տիգրան Մեծի 65	GS6	**108495.00**	6002053
93000067	Ապարան քաղաքի նստավայր	ք.Ապարան, Գայի 11	GSG10	**56215.00**	10000866
ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
61000242	Արմավիր քաղաքի նստավայր	ք.Արմավիր Հանրապետության 41	G-16 Gaz Suzan	**54680.00**	16001849
62000100	Էջմիածին քաղաքի նստավայր	ք.Էջմիածին,Կամո 15	G-40 Gaz Suzan	**74270.00**	40002210

Բաժ. քարտի համարը	Անվանումը	Հասցեն	Հաշվիչի տիպը	Ծառայության գինը	Հաշվիչի համարը
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան					
15001924	Կենտրոն նստավայր	Տիգրան Մեծ 23/1	G40ELec M	89200.00	40002248
18002200	Շենգավիթ նստավայր	Արշակունյաց պող. 24/1	KYPC G-100	90800.00	9027
17000375	Ավան նստավայր	Գյուլիքևխվյան 20	KYPC G-65	91510.00	7777
12000980	Աջափնյակ 1 նստավայր	Նազարբեկյան 40	KYPC G100	89605.00	8401
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան					
13001469	Արաբկիր նստավայր	Ներսիսյան 10	G - 25A Elec	89715.00	25/200/3
14003418	Էրեբունի նստավայր	Խորենացի 162Ա	G - 25A Elec M	90055.00	25000711
ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
28000038	Գյումրի քաղաքի նստավայր	ք. Գյումրի, Անկախության հրապ. 7	G-40 Elkor-MU	85390.00	40073033
25000029	Անի քաղաքի նստավայր	ք. Մարալիկ, Շահինյան 198	G-6 Gaz Suzan	72465.00	06000578
ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
95000196	Կապան քաղաքի նստավայր	ք.Կապան, Մելիք Ստեփանյան 3/2	G-16 Elcor-MU	56735.00	16198511
96000081	Գորիս քաղաքի նստավայր	ք.Գորիս, Ազատության 4/1	G-10 Elcor-MU	89265.00	10001289
ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան					
71000167	Իջևան քաղաքի նստավայր	ք. Իջևան Նալբանդյան 1/1	G10	22195.00	10002324
72000099	Դիլիջան քաղաքի նստավայր	ք. Դիլիջան Շահումյան 15	G10	79705.00	10001502
73000067	Նոյմբերյան քաղաքի նստավայր	ք. Նոյեմբերյան Կամոյի 2	G-16	81010.00	16000310
74000038	Բերդ քաղաքի նստավայր	ք. Բերդ Այգեստան 49Ա	Gbc	85765.00	06001947
	Ընդամենը			2951200.00	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02583241
ՀՀ 900011192151
Ղեկավարի պարտականությունները կատարող

Ն. Գալստյան

(ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ
<<Էյ-Ի-Ջի-Սերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Ադոնցի 10
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2470100768150010
ՀՎՀՀ 00930884
Հեռ. 010-29-75-27,20-94-60

Հ. Հարությունյան

(ստորագրություն)Կ.Տ